

ԻՍԼԱՄ - ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՆԸ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ Է ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՅԱԿՑՈՒԹԵԱՆ

Ազգային երկխոսության արդիւնքը կ'ըլլայ երկրի մը ապագայ ուղղութիւնը նախապատրաստող, առաւել «բազմակարծիք և ժողովրդավարական» պետութեան կառուցման միջոցով: Իբրեւ Իլսամ-Քրիստոնէայ ազգեր՝ մեր կենցաղի, լեզուական եւ մշակոյթի տարբերութիւններով հանդերձ, իրար քով համախմբուելու եւ մէկտեղելու ուժականութիւնը ունինք, ի գործ դնելու ամէն կարելիութիւն երկրիս խաղաղութեան համար:

Ուրբաթ 12 Հոկտեմբեր, 2012-ին, Վեր. Համայնքապետ Յարութիւն Սելիմեան ընդունեց պաշտօնական այցելութիւնը Իսլամ կրօնաւորներու Հայ Աւետարանական Բեթել Եկեղեցիի գրասենեակին մէջ:



Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Սուրիան յուզող մերօրեայ հարցերը սուրիական հայրենիքի դիմագրաւած տազնապի ներկայ զարգացումները, մտահոգութիւններն ու վտանգները, որոնք մեզ կը շրջապատեն եւ մեր մէջ տեղի կ'ունենան: Խաղաղութեան, ապահովութեան ու համակեցութեան խորհրդանիշ հանդիսացող Սուրիան, վերջին աւելի քան մէկ ու կէս տարուան ընթացքին վերածուեցաւ հակամարտութեանց, անապահովութեան ու չարաղէտ պատերազմական թատերաբեմի:

Վեր. Համայնքապետը շեշտեց, թէ՛ հայ համայնքը ըլլալով եւ մնալով սուրիացի ժողովուրդի անբաժան ու անբաժանելի մասը, ինք եւս կրեց ու կը շարունակէ կրել համընդհանուր տառապանքն ու նեղութիւնները, որոնք կը ներքաշեն անխտիր բոլոր քաղաքացիները՝ չարագոյն փորձութիւններու մէջ: Ան ըսաւ. «Մեր համայնքը՝ եկեղեցական թէ ազգային կառոյցներով ու կազմակերպութիւններով միշտ գործած է եւ կը շարունակէ գործել անկողմնակալ կեցուածքով, առաջնորդուած մեր ժողովուրդի նկարագիրին իւրայատուկ ու հիմնական սկզբունքով՝ դրական ներկայութեամբ»:



Վերապատուելի Համայնքապետը իր քաջալերական ու յուսալից կեցուածքով, շեշտեց, թէ՛ իբրև Սուրիահայ գաղութ յուսադրուած ենք, որ Սուրիան ինչպէս նախապէս, ապագային եւս պիտի մնայ յենած՝ իր գոյարար սկզբունքներուն նկատմամբ միակամութեան, հայրենի հողին եւ ժողովուրդին ամբողջականութեան եւ միութեան եւ իր բոլոր զաւակներուն համակեցութեան կամքին վրայ:

Իսլամ կրօնաւորները ամբողջապէս բաժնեցին արտայայտուած խօսքերը եւ վերյիշեցման կարգով ըսին, թէ՛ իսլամ-Քրիստոնէայ երկխօսութիւնը միակ ուղին է համերաշխ գոյակցութեան:

Թղթակից